ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0041 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Էրեբունի փողոց, 12

Հեռ.՝ (+ 374 10) 43 04 21
Ֆաքս՝ (+ 374 10) 45 09 60
Վեբ կայք՝ www.ssfs.am

N 223 / 24.02. 2012թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի

նախագահ տիկին Շ. Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 2012 թվականի փետրվարի 13-ի
155-ի 9 գրության

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր կողմից առաջադրված հարցման կապակցությամբ հայտնում եմ հետևյալը.

1. 2011թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, այսինքն՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ստուգումներից առաջ, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվել են ստուգումներ «Աշտարակ կաթ», «Դուստր Մարիաննա» և «Անի կաթ» ընկերություններում, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտների ղեկավարների նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, և նշանակվել է վարչական տուգանք՝ 200 000-ական դրամ գումարի չափով:

2.Նշված ընկերություններում ստուգման ընթացքում նմուշառված կաթնամթերքներում արգելված սննդային հավելումներ չեն հայտնաբերվել:

3.Հետագա ստուգումների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը կտեղադրվի ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պաշտոնական կայքում (www.ssfs.am):

4. Ինչ վերաբերում է կոկոսի յուղի վնասակարությանը՝ որևէ նորմատիվ փաստաթղթով այդ նյութը չի արգելվում, իսկ դրա օգտագործման ժամանակ ռիսկի գնահատումը տարաբնույթ է: Այնուամենայնիվ, ժամանակակից բժշկությունը հակված է այն կարծիքին, որ առողջական վիճակի վատթարացումներ տեղի չեն ունենում: Որպես փաստարկ բերվում է այն իրողությունը, որ կոկոսի յուղը շատ տարածված է մի շարք արևադարձային երկրներում, սակայն դրանցում սիրտ-անոթային կամ այլ համակարգերի հիվանդությունների աճ չկա:

Հարգանքով՝

Հ. Գևորգյան

Կատ. Ա. Հակոբյան

հեռ. 29-73-21